



ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՒՇ-ԲՈՒՂԱՆԸԽԻ ԲԱՐԲԱՌԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

(«Հեփիաթներ»-ի առաջաբանից)<sup>1</sup>

Ա ձայնավորը լատասկղբում, բառամիջում և բոտավերջում հնչում է այնպես, ինչպես գրաբարի կամ արդի զրական աշխարհաբարի ա-ն. աղալ լարի, գարի, կարդա, գնա և այլն: Միայն մի քանի բառերի մեջ ա-ն հնչում է որպես քմայնացած լ, բայց առաջամբ ասել բառի, որի սկզբում ա-ն կալուն չէ, արտասանվում է և որպես քմայնացած ը (m) և որպես սովորական ը, ինչպես՝ տսեց և ըսեց, կմսե և կըսե:

Ե ձայնավորը միավանկ բառերի սկզբում հնչում է իե, ե, օրինակ՝ եղ > իեղ, եզ > իեզ, երգ > իերգ, մեր > միր, ձեր > ձիր: Բայց երբ բառն ածում է ածանցմամբ կամ բարդությամբ՝ հնչում է որպես ե. օրինակ՝ եղծուծ > եղծուծ, եզնկ > եզնկ, այսպես և հրենկ > հրենկ, եղավ > եղավ: Ե՛ > ը—մեր > մըր, մըզնե, ձեր > ձըր, ձըզնե և այլն:

Է-ն ամեն պարագայում հնչում է որպես ե. օրինակ՝ եշ, դեշ, գել, եծ, կ'ուաե, կ'ըսե:

Ո-ն միավանկ բառերի սկզբում և վերջում հնչում է ու<sup>ա</sup> օրինակ՝ ոսպ > ու<sup>ա</sup>ոսպ, ոստ > ու<sup>ա</sup>ոստ, ձոր > ձու<sup>ա</sup>որ, կող > կու<sup>ա</sup>ող: Բայց ընդ-

<sup>1</sup> Այս մասին կա տպագրության պատրաստ մեր «Մուշ-Բուլանրի» բարբարոս մեծածավալ ուսումնասիրությունը—Ս. Մ.:

մավանկ բասերի սկզբում և միջում հնչում է օ. օրինակ՝ ուտ, բայց օտտաան, ձոր ձօրաան (ձորեր), ոսպ, բայց օսպով (փլավ):

Բացառությամբ է կազմում նր հարարերական շաղկապը, որ թեև միավանկ է և պեղք է հնչեր առ. բայց պարձել է օր. օրինակ՝ Հովհ. Թամանյանի «Միթամ նոր եմ ցրցում այն քն որ կարեմ» Մաշ-Ֆուլանը իցին պիտի ասեր՝ դուա նոր իմ ջրջնկե, օր թե կարիմ: Որ անձրե դա՝ ցանք կաղեկնա (նր անձրե դա՝ ցանքը կլավանա): Միայն գրաբարի ոյր-ը պարձել է վիր, վին (ամ):

Բ. ձայնավորը իբր որոշիչ հոյ, գոյաթյան չունի, որովհետև բառերը որոշվում են զ նախդիրով. Վմարդ (մարդը), Վձեռք (ձեռքը), Վերես (երեսը): Բայց ձայնավորով վերջացող բառերը զ նախդիրի հետ միասին առնում են և և որոշիչը.— Վկատուն, Վհոգին, Վգինին, Վալնին, Վագին և այլն:

Ու-ն հնչում է որպես ու. օրինակ. ութ, բութ, լուսուհ, թութ, կծու, թթու: Ու-ն բառաբարդման կամ ածանցման պեղքում փոխվում է ը-ի, ինչպես, օրինակ՝ ախու—ըխտավոր, ունչ—ընչիկ: Մյուս սովորական փոփոխությունները գրական լեզվի նման են. տուն, ա(ը)ներ, փուռչ, փ(ը)նչեր այլն:

Ի-ն անփոփոխ պահպանվում է ամեն պարագայում. հնչյանափոխության և սղման կանոնը նային է գրական լեզվի հետ:

#### ԵՐԿՐԱՐԱՌՆԵՐ

Այ-ը պարձել է Է. աայլ > աել, գայլ > գել, փայտ > փետ, այծ > էծ: Այ-ը պառնալով Է՝ ենթարկվում է հնչյունափոխման կանոնին.— Այծ, էծ, իծան (ալծեր) գայլ, գել, գլլանք (գալլեր) և այլն:

Գրաբարի այ վերջավորությունը պարձել է պարզ ա.— դաթայ > գաթա, քահանայ > գ՛հանա, սատանայ > սատանա և այլն: Իսկ այս պարզ ա-ն՝ սեռական և արական հոլովներում ընկնում է.— գաթա > գաթի, սաաանա > սատանի, նայնիսկ փոխառյալ բառերում՝ փաշա > փաշի, աղա > աղի: Սրանց հոգնակի ողղականը լինում է՝ փաշեք, աղեք, սատանեք և այլն:

Իւ-ն (յա) պառնում է ու.— ձիւն > ձուն, սեռական՝ ձահ (ձեան, ձյան), սիւն > սուն, սեռական՝ սան (սեան, սյան), իւր > (յար) ուր, սեռական՝ ուրին, իւրեանց (յուրյանց) > ուրանց. իւրեան-

իւրեան (լարլան) > ուրին-ուրին (ինքն իրեն), խիւս (խլուս) > փափլախուս, ՚իւսիս > հուսուս:

Սա-ն դառնամ է և. կորեակ > կորեկ, ցորեան > ցորեն, վառեակ > վառեկ՝ մեծաթեան > մեծութենի:

Ոյ-ը դառնում է ու. լոյս > լուս, բոյս > բուս, կոյս > կուս:  
Էօ հնչյունը զոլութուն չունի, փոխառյալ բառերի Էօ-ն դառնում է օ. գէօղ (աչք) > գօղլք (ակնոց), քէօռ > քօռ (կալր):

Ղ-ն հնչում է իբրև խ թե՛ ընդիկ և թե՛ փոխառյալ բառերում. օրինակ՝ Ղակաս > Խակաս, դաղի > խաղի, դաղ > խաղ, դարիք > խարիք և այլն:

Մլուս բաղաձայնների հնչյունափոխութեան մասին խոսելը դանց ենք առնում:

Հոգնակին կազմող մասնիկներն են՝ Լը և Լեք. — հաց — հացեք, ծաղիկ — ծաղկեք:

Ի-ով վերջացող բառերը ք-ով են հոգնակի դառնում. — հոգի — հոգիք, ալգի — էգիք, զլուղացի — գեղացիք, քաղաքացի — քաղքեցիք: Կան և հետևյալ հոգնակիակերտ մասնիկները.

Տիք. — ախպրուիք, կնկտիք, քարվտիք:

Ան. — ձի — ձիան, գէլ — դիլան. փէջ — փիջան (ասեր):

Վան. — էջ — իջվան:

Տան. — ձորաւան (ձորեր), գմեջ — գմըջաւան (գոմեջներ):

Իան. — դեզ — դիզլան (դեզեր), գեղ — գեղլան (գլուղեր):

Ստան. — էգեստան (ալգեստան), սատանեստան (սատանաներ):

Իկ. — մարդիկ, (մարդեր):

Հ Ո Ղ Վ Ո Ւ Մ

Ի հոլով

Ուղղական-հալցական	— հաց, դհաց	հացեր, դհացեր
Սևոական-տրական	— հացի	հացերու
Իացառական	— հացի	հացերուց
Գործիական	— հացով	հացերով

Ու հոլով

Ու. Հ. — հողի, զհողի	հողիք, զհողիք
Ս. Տ. — հողու	անդործածական

Իտոր եթե վերջանում է Ե-ով, հոգնակիի դեպքում մեկ Ե-ն ընկնում է:

Բայ. — հոգուց  
Գործ. — հոգով

անգործածական

Ա.Ն հոլով

Ու. չ. — ձուն, դձուն	ձներ, դձներ
Ս. Տ. — ձան	ձներու
Բայ. — ձնե	ձներեց
Գործ. — ձնով	ձներով

ՎԱՆ հոլով

Ու. չ. — տարի, զտարի	տարիք, զտարիք
Ս. Տ. — տարվան	—
Բայ. — տարվելն	—
Գործ. — տարով	—

ՈՐ հոլով

Ու. չ. — ախպէր, դախպէր	ախպրտիք, դախպրտիք
Ս. Տ. — ախպոր	ախպրտոց
Բայ. — ախպոր (մոտից)	ախպրտոց (մոտից)
Գործ. —	ախպրտանցով

ՈՋ հոլով

Ու. չ. — քոր, դքոր	քորվրտիք, դքորվրտիք
Ս. Տ. — քրոջ	քորվրտոց
Բայ. — քրոջ (մոտից)	քորվրտոց (մոտից)
Գործ. —	—

Դերանուններից ցուցական այս, ես-ը ընկել է, դրան փոխարինել է իդա (այս, էս), իդոնք (սրանք)։ մլաս ձևերն են էդի, ուդի, ինդոնք- էնի, ընդոք կամ ինդոք (նրանք)։ Անձնական դերանուններից առաջին դեմքի հայցական հոլովից հա ավելացվում է ի.— զիս, զիսի. նույնպես ստացական հոգերից հետո գալիս է ի.— զձեռքսի, զգլուխսի, զոտքսի, զիրքդի. կնիկդի, ճժերդի և այլն։

Մինչ կը բարբառներում մի անորոշը դարձել է մը. Մուշ-Բալանըլի բարբառում դարձել է մե.— հաց մե (մի հաց), մարդ

մի. (մի մարդ, կամ մարդ մը). բայց եթե դրան հաջորդի լե (ալլէ էլ), գրվում է մը.— մարդ մը լե տեսա, հաց մը լե կերա և այլն:

Մնր, ձնր ուսացական գերանունները, ըսա գրաբարի, հետագաս ևն և դառնում են մր, ձր, — ինչպես՝ ձևոք մի (մեր ձևոքը), գլխի մի (մեր գլխի), տուն ձի (ձեր տունը), արա ձի (ձեր արտը):

Բառասկզբի ա, ն, ի, ո ձայնավորներից ասաջ ավելանում է յ (հադդարվին): այդպիսի յ-երը նշանակվել են յ ձևով:

յԱ. — յախպոր, յառջև, յանգան, յըմեն (ամենքը):

յԵ. — յերեկ, յելնել:

յԻ. — յիրկուն, յիջնել, յիմնալ, յիշինալ:

յՈ. — յսոք, յօդա (սենյակ):

#### Բ Ա Ց Ե Ր

Մուշ-Բուլանրիի ըարթառը գրաբարի նման ունի չորս լծոր-դոթյուն. ամ. եմ. իմ. ում:

1) Ամ.— կարգամ, կարգաս, կարդա, կարդանք, կարդաք, կարդան:

2) Եմ, որ դարձել է իմ եզակի Ա, Բ և հոդնակի Ա, Բ, Գ, դեմքերում և միայն եզակի Գ դեմքում լինում է Ե.— սիրիմ, սիրիս, սիրե, սիրինք, սիրիք, սիրին:

3) Իմ.— քնիմ, քնիս, քնի, քնինք, քնիք, քնին:

4) Ում.— հադում, հագուս, հագու, հագունք, հագուք, հագուն: Վերջին 4-րդ ձևը չեզոք բայերը վերածում է ներգործակա-նի, ներգործականը՝ անցողականի:

Հագնել.— կր հագում (հագցնում եմ):

Կարդալ.— կը կարդըցում (կարդալ եմ տուլիս, կարդացնում եմ):

Կը եղանակիչը, որ գրվում է սահմանական եղանակի ներկա և անցյալ տնկաատր ժամանակներում՝ բայերից առաջ, ձայնավոր սկզբնատառ բայերի սկզբում սղվում է և դառնում թրթոտն գ կամ՝ կ. օրինակ՝ գ՝նամ (կ՛նանմ), գ՛իջնամ, կ՛ուտիմ: Բայց գալ, լալ, տալ, թվալ բայերից առաջ դառնում է գի կամ կի, օրինակ՝ գիլամ, (լալիս եմ), գիլամ (կըզամ, դալիս եմ), կիտամ (կտամ), կիթվա (կըթվա, թվամ է), պտտճոտն տին է: որ այդ բայերից առաջ ի է ավելացել, այսպես՝ ի տալ, յիլալ, քի գալ, ի թվալ:

Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակում եզու-կի և հոգնակի Ա դեմքերը նախնացել են. օրինակ՝ ես հաց կու-տեմք, մենք հաց կուտեմք: Եզակի Ա և հոգնակի Բ և Գ դեմքը

բում ի-ն ընկած է. օրինակ՝ դա հաց կ'ուտեր, նա հաց կ'ուտեր (փոխանակ՝ դա հաց կ'ատելի), դուք հաց կուտեք. նորոնք հաց կ'ուտեն (փոխանակ՝ կատելիք, կուտէին):

Ի՛նչերը բացասական են դառնում կամ չ-ով, կամ նախ բացասվում է եմ օժանդակը և դառնում չըմ, չըս, չը, ապա գրվելով բալերից առաջ՝ ստացվում է՝ չըմ կարգա, չըս կարգա, չը կարգա և կամ՝ չկարգամ, չկարգաս, չկարգա: Երկու դեպքում էլ շեշտվում է այլալ բառի առաջին վանկը:

Հրամայականի մ'ի՛ տրդելիանը դառնում է մը՝— բաղաձայնից առաջ և մ՛— ձայնավորից առաջ.— մը՛ կարգա, մը՛ վաղի, մը՛ ծեծի, մ՛է՛նի (մի՛ սնի), մ՛ո՛ւտի (մի՛ ուտի), մ՛ը՛սի (մի՛ ասի): Այսանդ նույնպես շեշտվում է այլալ բառի առաջին վանկը:

Թ՛ո՛ղ-ով կազմվող Գ՛ դեմքի հրամայականում նույնպես ընդ-է կառնում կամ ձայնավորից առաջ Բ.— թըղ կարգա՛, թըղ վազէ՛, թըղ ծեծէ՛.— թ՛էրթա, (թող երթա), թ՛ասէ (թոզ ասե), թ՛ասէ (թոզ ուտե) և այլն:

Բե՛ր, կե՛ր, աո՛ւր հրամայականները դառնում են բի՛, ցի՛, աո՛ւ: Շեշտվում են կոչական բասերի առաջին վանկերը.— անդա, անխի, ա՛խպէր, լսս, քի՛րվա, քսվոր, Պե՛արոս, Պո՛ղոս և այլն:

Հետ, մոտ, վերա, մեջ նախադրութունները դարձել են հըտ, մըտ, վըր, մըջ, որոնցից հըտ և վըր արական հոլով են պահանջում. օրինակ՝ վըր մըզի, շնավոր նոր տարին վըր քըզի, վըր քա ճօկնեքունց էղնի: Հըտ գիլունց գառ կատէ, հըտ ախրունց վալոլեր՝ (վայնասուն) կէնե (ստած): Լ՛նդհակառակը, մըտ-ը երբեմն ուղղական հոլով է առնում, եթե խնդիրը դերանուն է, ըստ սովորականին՝ արական հոլով: օրինակ՝ կ՛էրթամ մըտ հաքիմ (հեքիմի մոտ), դպնչներդի կիսամ ծակիլ. և մեջ, մըջ՛ մըջ քար, մըջ էրկաթ գրանաս՝ բիրիս իմ յուղած (քարի, երկաթի մեջ էլ որ լինի, իմ աղածը պետք է դանկա բերես):